ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՐԳԱՐԵՆ
(Եղիշե Չարենց - 125)

2022 թվականի մարտի 13-ին լրացավ հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակը: Դա սովորական հոբելյան չէ և ոչ էլ տաղանդավոր գործչի հիշատակի հերթական մեծարում: Չարենցը հայ ժողովրդի հանճարի մի նոր փայլատակում է, որ լույսի անմարում շողեր ցանեց բազմադարյան հայ մշակույթի նորօրյա ճանապարհին՝ դառնալով համազգային ու համամարդկային երևույթ: Պատահական չէ, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ մեծ բանաստեղծի 100-ամյա հոբելյանը նշվեց ամբողջ աշխարհում: Հայ ժողովրդի համար 1997-ը դարձավ Չարենցի տարի՝ արժանի մի տուրք մարգարե-բանաստեղծ որդու սուրբ հիշատակին:

Ե. Չարենցը մեծանուն արվեստագետների շարքում ամենից երջանիկ, բայց միաժամանակ ամենից ողբերգական դեմքն է: Երջանիկ, որովհետև նրա տաղանդը ծիածանված էր աստվածային շռայլությամբ, ողբերգական, քանի որ նա տեսավ մայր ժողովրդի սարսափելի ցեղասպանությունը, հայրենի երկրի մեծ մասի կորուստը, ապա դարձավ անհատի պաշտամունքի զոհը՝ անտեղի մեղադրվելով իր կողմից պաշտպանված ու փառաբանված Հեղափոխության գաղափարներին դավաճանելու մեջ:

Սակայն իր եղերական մահից 17 տարի անց, մարդկային խղճի և արդարության հրամայականով վերածնվեց երջանիկ Չարենցը՝ որպես մայր ժողովրդի հոգևոր գեղեցկության խորհրդանիշ, իբրև հավերժության ճամփորդ:

Ե. Չարենցի 100-ամյա հոբելյանը նորագույն շրջանի հայ պոեզիայի տոնն էր, քանզի հետչարենցյան շրջանի բոլոր ականավոր բանաստեղծները սերվել են նրա զարմից, նրա հոգևոր ժառանգորդներն են: Իրենց բարձրարվեստ ստեղծագործություններով և երխտագիտական խոստովանություններով այդ են հաստատում Հ. Շիրազն ու Պ. Սևակը, Հ. Սահյանն ու Ս. Կապուտիկյանը, Վ. Դաթյանն ու Մ. Մարգարյանը, Գ. Էմինն ու Շ. Դավոյանը... Եվ այդ շարքը գնալով ավելի է խտանում: Ե. Չարենցը 16 տարեկան էր, երբ ծանոթացավ 20-րդ դարի հայ պոեզիայի աստղերից մեկի՝ Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» զեկուցմանը, որտեղ անմահ երգիչը խորհուրդ է տալիս չբավարարվել միայն հայրենասիրական գործերով, որ ժամանակն է ընդլայնել հայ գրականության թեմատիկ-գաղափարական սահմանները, դարձնել բազմաբնույթ, որպեսզի օտարները ևս կարդան մեզ, ինչպես մենք ենք ըմբոշխնում համաշխարհային մեծ արվեստագետների երկերը: Սակայն Տերյանի այդ խորհրդից հետո, չանցած մեկ տարի, բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմի հրդեհը, ավերվեց ու ավերակվեց Երկիր Նահիրն՝ Վ.Տերյանի սրտին բերելով անմարում վիշտ ու մորմոք: Հայ բանաստեղծները կրկին դարձան հարազատ երկրի ու հայրական տան կորստի, ժողովրդի ծանր ճակատագրի ցավակիրներ, ազգային ակնկալությունների օրհներգուներ: Այդ երգիչների շարքում առանձնահատուկ տեղ գրավեց Ե. Չարենցը:

* * *

Չարենցագետներից Ս. Աղաբաբյանը մեծ երգչին համարում է արևի և ճանապարհի բանաստեղծ: Երազելով արև ու ընտրելով դժվարին ճանապարհ՝ Չարենցը կարողացավ ստեղծել իր դարաշրջանի դիմագիծը, թափանցել կյանքի խորհուրդների մեջ, վառվել սիրո զգացումների հրով, բայց ավելի շատ և ամեն ինչում նրան հուզեց հայ ժողովրդի ճակատագիրը: Նրա պոեզիան առաջին հերթին հնչեց՝ որպես Երկիր Նաիրիի արևային հառնումի լեգենդ, բայց, ավա՜ղ, նա ականատես եղավ աննախընթաց աղետի մեջ նրա փրկության թպրտացող, անարև ու անժպիտ հայրենիքի փլուզմանը, դարձավ իր անմխիթար երկրի ու դժբախտ ժողովրդի դառն ճակատագրի խաչակիրը, նրա փրկության ուղիների զինվորյալն ու երգիչը: Տեսնելով մայր ժողովրդի քաղաքական հույսերի խորտակումը՝ բանաստեղծն ապրեց հոգեկան խոր դրամա: Ժողովրդի մի մասի կորստի իրողությունը հանգիստ չտվեց նրան: Տառապանքի ու ոգորումների, երազանքի, կարոտի երգերով նա դարձավ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի գրչեղբայրը և ժառանգորդը՝ իր հոգում հյուսելով Կապուտաչյա Հայրենիքի մայրական պատկերը: Սակայն երազ-հայրենիքի լուսե պատկերին փարվելու փոխարեն Չարենցը տեսավ «որբ, արնաքամ ու ավերակ» մի երկիր, դիմեց պատերազմի և հաղթանակի աստված առասպելական Վահագնին՝ կասկածի տակ առնելով ազգային ռոմանտիզմի գաղափարը.

Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս հզոր, մարմնացում Ուժի,
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով,
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

Այդպես, կապուտաչյա Հայրենիքը վերափոխվեց մահվան տեսիլի ու երբեք հանգիստ չտվեց Չարենցին:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին հայ ժողովրդի մտավորականներից շատերը հավատացին, որ եկել է Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատելու և Արևելյան Հայաստանին միավորելու, «Հայկական հարցը» լուծելու վերջնական ժամանակը: Բազմաթիվ կամավորականներ մեկնեցին ռազմաճակատ: Նրանք համոզված էին, որ, միանալով ռուսական բանակին, կործանումից կփրկեն ավերվող երկիրը: Նրանց միացավ նաև 18-ամյա Չարենը: Հայկական 7-րդ ջոկատի հետ նա Կարսից հասավ Վան, սակայն զինվոր բանաստեղծը, հակառակ «ազգության փրկության» հավաստիացումներին, ականատես եղավ պատերազմի ավերող արհավիրքներին, ավերված քաղաքների ու գյուղերի սահմռկեցուցիչ պատկերներին՝ ապրելով կոտորածների սարսափը: Նա հասկացավ, որ այդ պատերազմը մի սպանդանոց է, որի զոհը դարձավ առաջին հերթին իր ազատաբաղձ ժողովուրդը: Այդ ապրումներից էլ ծնվեց «Դանթեական առասպել» պոեմը, որտեղ երիտասարդ պոետը պատկերեց ժողովրդի մեծ ողբերգությունն ու մարդու հոգեկան փլուզումը.

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն,
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր –
Կյանքը դարձնում նզովյալ գեհեն:

Չարենցի համար Առաջին համաշխարհային պատերազմի ամենասարսափելի հարվածը եղավ հայ ժողովրդի մի զգալի մասի բնաջնջումն ու երկրի կորուստը: Նրա «Դանթեական առասպել», «Աթիլլա» երկերը, Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ», «Հոգեհանգիստ» բանաստեղծությունները, Դ. Վարուժանի արցունքածին երգերը հայ ժողովրդի անհուն վշտի և մաքառման բարձրարվեստ պատկերներն են, ժամանակաշրջանի հայոց կյանքի պոետական վավերագրերը:

1917թ. Եղիշե Չարենցը որոշ ժամանակ եղավ Էրզրումում: Նա այդտեղ ստեղծեց «Ազգային երազ» պոեմը: Պատերազմի անմիջական տպավորությունների տակ գրած այս երկում բանաստեղծը խրամատային ողբերգությունը ներկայացնում է երգիծական հյուսվածքով: Ազգային երազը Չարենցը պատկերում է որպես կրակահանդես, որի մեջ հրդեհվում է հնամյա Երկիր Նաիրին՝ Հայոց աշխարհը.

Մա՜հ, այստեղ հազա՜ր-հազա՜ր
Հեռանում են ու մարում –
Այս անիծված, անհավասար,
Արյունահեղ աշխարհում:
…Համրվում են ժամերն անդարձ,
Ու աշխարհից ցուրտ ու մութ
Հեռանում է անվերադարձ
Մի արնաքամ ժողովուրդ…

Պետք է նշել, որ մեր ժողովրդի համար ստեղծված անմենածանր պահերին Ե.Չարենցը չէր հուսալքվում: Կյանքն ու գալիքը կանչում էին նրան, և նա պատրաստ էր միանալու իր արյունաքամ ժողովրդի նոր գոյամարտերին:

* * *

Ստեղծագործական և հոգեկան ապրումների հախուռն ու դրամատիկ պահեր ունեցավ Ե. Չարենցը 1917-1920 թթ.: 1918թ. բանաստեղծը մտավ կոմունիստական կուսակցության շարքերը և նվիրվեց սոցիալիստական հեղափոխությանը: Սակայն այդ կարծիքը մտացածին էր: Չարենցը գնաց Ցարիցինի տակ պաշտպանելու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները: Ոմանց թվաց, թե Չարենցը մոռացավ Նաիրյան երկրի ցավն ու վիշտը և նվիրվեց սոցիալիստական հեղափոխությանը: Մինչդեռ այդ կարծիքը մտացածին էր: Չարենցն ազգային ողբերգությունը և հեղափոխությունը բնավ չէր հակադրում իրար: Մեծ բանաստեղծը համոզված էր, որ Հոկտեմբերը կլուծի հայ ժողովրդի և՛ ազգային, և՛ սոցիալական հիմնախնդիրները: Բայց ժամանակներն այնպիսին էին, որ ժողովրդի ճակատագրի և հեղափոխության փոխհարաբերությունները բարդ ընթացք ստացան թե՛ կյանքում և թե՛ բանաստեղծի երգերում: 1917-1920 թթ. գրած ստեղծագործություններում Չարենցը հեղափոխական ռոմանտիզմի շնչով արտացոլեց ժողովրդի անցյալը, ներկան, ապագան: Բայց նա երբեք չմոռացավ մեր ժողովրդի թե՛ քաղաքական, թե՛ կենսական հոգսերը: Դրա լավագույն վկայությունը «Ողջակիզվող կրակ» շարքն է: Հեղափոխության գինվորյալ Չարենցը կրկին իր անօգնական ժողովրդի ցավի ու կարոտի հետ էր.

Կապույտ կարոտը ոչի՜նչ, մեզ ոչինչ չտվեց,
Մութ է խորհուրդը կյանքի, ու անհուն, ու մեծ…

Այդ «կապույտ կարոտը» Նաիրի երկրի կարոտն էր, որ բանաստեղծի սիրտը բզկտում էր նույնիսկ այն պահին, երբ ծառայում էր ողջակիզվող կրակին՝ հեղափոխությանը.

Անհաշտ եմ, ո՞րբ եմ, խեղճ,
Ինչպես իմ երկիրը, որ…
Կորել է աշխարհի մեջ.
Լռել է, անտեր, անօր…
Չարենցն այդ օրերին իր երկիրը համարում էր անսփոփ, բախտազուրկ, ավերակ, արնաներկ.
…Մխում է սիրտս հիմա որբ,
Մխում է սիրտս բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ…
Հեղափոխության կարմիր զինվոր բանաստեղծն իր հրե երգերը գրում է մայր հայրենիքի շուրթերին հնչեցնելու համար: Բայց թախծում և կսկծում է երգչի սիրտը, որովհետև արնաներկ էր հողը Հայոց.
Եվ այս երգերը իմ կարմիր, ա՜խ, այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն –
Ինչպե՞ս պիտի, արդյոք, հնչեն, ա՜խ, այս երգերը իմ կարմիր –
Իմ ավերա՜կ, իմ ո՞րբ երկրում…

Չարենցը մասնակցեց հեղափոխական կռիվներին, երգեց խելագար ամբոխների պայքարը, դիմեց հնդկական կրակի և արբեցման դիցուհուն՝ Սոմային, ստեղծեց «-Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները, «Անկումների սարսափից» «Մահվան տեսիլ» բանաստեղծությունները և այլ գոհարներ: Նա 1919թ. Գ. Աբովի հետ գնաց Կարս, զբաղվեց ուսուցչությամբ, 1921թ. մեկնեց Մոսկվա՝ սովորելու: Ամեն դեպքում նրան հուզողը ժողովրդի ճակատագիրն էր՝ առնչված ժամանակի բարդ իրավիճակներին:

* * *

Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրից Չարենցը հայ պոեզիայի դրոշակակիրն ու ազատամարտիկն էր: 20-30-ական թվականներին նա ստեղծեց իր բազմաժանր ու բազմաբնույթ, բազմաշերտ ու բազմերանգ բանաստեղծական շարքերն ու պոեմները, բալլադներն ու տաղերը, խորհուրդներն ու արձակ էջերը: Ժամանակն է, որ չարենցագիտությունն ուշադրություն դարձնի անմահ գրողի ստեղծագործության խորքային բացահայտումներին, վերանայի այն միանշանակ ու սխեմատիկ գնահատականը, ըստ որի Չարենցը համարվում է միայն Հոկտեմբերի շեփորահար:

Պետք է նկատի ունենալ Չարենցի երկերում երկու իրականության գոյությունը: Մի կողմում կորուսյալ Հայրենիքի, կիսակործան ժողովրդի ողբերգությունն է, մյուս կողմում՝ Մեծ Հայքի մեկ տասներորդ մասը կազմող Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող հեղափոխական խմորումները: Այդ են ապացուցում նրա «Ամենապոեմ», «Չարենց Նամե», «Խմբապետ Շավարշը», «Պատմության քառուղիներով», «Սասունցի Դավիթ», «Մահվան տեսիլ», «Դեպի լյառը Մասիս» և այլ պոեմները, «Տաղարան» շարքը, «Երկիր Նաիրի» վեպը և այլ գործեր: Հանձինս այդ ստեղծագործությունների Չարենցը հյուսեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի նորօրյա երգը «անցյալ-ներկա-գալիք» հասկացությունների հոլովումով: Այստեղ հատկանշական է «Տաղարան» շարքը: Այն անզուգական մի պատում է, որտեղ քնարական հերոսը սիրո անձնական

զգացումին գումարում է հայրենիքի հանդեպ ունեցած պաշտամունքի անմար կրակը: Բանաստեղծը նոր օրերում չի շրջանցում մեր ազգային կորստի ցավը: Շարքի նախավերջին երկում դիմելով Հայաստանին՝ նա ընդգծում է.

Հազար ու մի վերք ես տեսել, էլի՞ կտեսնես:
Հազար խալխի ձեռք ես տեսել - էլի՞ կտեսնես:
Աշնան քաղած արտի նման՝ հազար զոհերի
Չհավաքած բերք ես տեսել - էլի՞ կտեսնես:

«Տաղարան»-ը ավարտվում է Հայաստանին նվիրած երկու բանաստեղծությամբ, որտեղ Չարենցը նորից ընդգծում է իր անհուն սերը հայրենիքի հանդեպ՝ ազգային ցավի և ներքին օրինական հպարտության համադրությամբ:

* * *

1930-ական թվականներին Խորհրդային Միությունում, այդ թվում և Հայաստանում փոխվեց վերաբերմունքը պատմական անցյալի նկատմամբ: Այն որակվեց որպես արդիականության թիկունք: Չարենցը դարձյալ առաջիններից էր, որ արձարձեց այդ կարևոր հիմնախնդիրը «Գիրք ճանապարհի», ժողովածուում, առանձնապես՝ «Պատմության քառուղիներով» շարքում: Այստեղ բանաստեղծը նորից կարևորեց «Երկիր Նաիրի» վեպում առաջադրած «Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ ենք լինելու վաղը» մտահոգությունը:

«Պատմության քառուղիներով» շարքում Չարենցը քննարկեց ժողովրդի դարավոր ճանապարհի, անկումների և վերելքների ու գոյության կարևոր կռվանների խնդիրները: Նրա վերաբերմունքը մեր նախնիների, թագավորների, իշխանների, ֆեոդալների հանդեպ քննադատական է, քանի որ ըստ պոետի՝ նրանք ժողովրդին չեն տարել մաքառման, պայքարի, դիմադրության ճանապարհով, միայն խորհել են ապարանքների ու զվարճությունների մասին, «Կրակ են հայցել օտար խարույկներից» իրենց գոյության հազարամյակներում՝ չծնելով «ոչ մի խոհ սերունդների համար»:

Չարենցը պատմության արժեքն ու ուժը տեսնում է ժողովրդի հավաքականության ու միասնության մեջ: Նա նշում է, որ թեկուզ հանճարեղ հայ ժողովուրդն ապրել է ճորտային կյանքով, բայց անվերջ կառուցել է, պայքարել.

Խոր գերության քարե կամարների ներքո,
Բռնության տակ հայրենի և օտար,
Նա մեր անպարտ ոգու ստեղծարար բերքի
Ճանապարհն է հարթել անդադար:

* * *

Արդի հայ գրականագիտությունը մեծ պարտք ունի Ե. Չարենցի հանդեպ: Խորհրդային տարիներին գռեհիկ հասարակաբանությունը, պրոլետարական արվեստի ստեղծման միամիտ քարոզները, գրականության կուսակցականության և դասակարգայնության լենինյան «սկզբունքները» իրենց բացասական ազդեցությունն են ունեցել չարենցագիտության ընթացքի վրա: Չարենցագետների գերակշիռ մասը կամա թե ակամա շրջանցել է պատմական ժամանակներին բնորոշ առանձնահատկությունները ու այդ ընթացքի մեջ՝ Չարենցի քաղաքական-հասարակական հայացքների, աշխարհըն-

կալման, կենսափիլիսոփայության, գեղագիտական սկզբունքների, դեպի քաղաքական ուժերն ունեցած վերաբերմունքի հարցերը: Հստակ և բազմակողմանի չեն բացահայտվել Չարենցի առնչությունները Հայաստանի առաջին հանրապետության իրողության հետ:

Երեսնականների սկզբից Չարենցն իր ստեղծագործությունների ենթաբնագրային արծարծումներում արտահայտել է իր վերաբերմունքը և՛ մեր ժողովրդի պատմական նոր ընթացքի, և՛ հայկական քաղաքական ուժերի անելիքների հանդեպ: Նման գործերի շարքում ընդգծված է «Պատգամ» բանաստեղծությունը՝ գրված 1933թ.: Այդ պատգամ-կոչն ուղղված է աշխարհասփյուռ հայ ժողովրդին և նրա քաղաքական կուսակցություններին, առանձնապես՝ վերջիններին, որովհետև նրանց պետք է, ազգային շահերի ընդհանրությունից ելնելով, ժողովրդին համախմբեն մեկ միասնական նպատակի շուրջ: Չարենցի պատգամը բոլոր ժամանակների համար է: Առանձնապես այսօր, երբ ազատ և անկախ Հայաստանում, Լեռնային Ղարաբաղի նորաստեղծ Հանրապետությունում, Սփյուռքում գոյություն ունեն համահայկական բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներ, երբ Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից շրջափակված են Հայաստանն ու Արցախը, անհրաժեշտ է դառնում Ե. Չարենցի մարգարեական պատգամը. «Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած որդիական ոգորումներն ու տագնապները, հուսալքություններն ու ակնկալությունները, որոնումներն ու հավատը Չարենցը խտացրեց այդ իմաստուն պատգամի մեջ, որ մեր փրկության, ազգային ճակատագրի հրամայականն է այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից:

Սոկրատ Խանյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ Գիտության վաստակավոր գործիչ